

82
2-16

910

м-у.
м-р-

ԱՄԵՐԻԿԱՆ ՊՐԵՍԻ ԶՈՒՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԵ ԿԵ ՊԱՐԱԽԵԱՎԵ




ՆԱԹ ԲԻՆՔԵՐԹԸ ԸՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀՈԶԱԿԱՆՈՐ ԳԱՂՏՆԻ
ՈՍՏԻԿԱՆԻՆ ՆՈՐԱՐԿԱԾՆԵՐԸ

ԹԱՐԴՄ. Ժ. 2.

ԹԻՒ 5

ԱՐԴԻՇԻ ԽՈՐԱՆԸ



Նաթ Փինքերթըն տեսաւ որ սոսկալի խորանին առափճանները
բացուեցան Օք. Լէօնիի տակ, որ խուլ ձայնով մը միրճուեցաւ
խորհղաւոր բացուածքին մէջ:

ԱՐԻՒՆԻ ԽՈՐԱՆԸ

ՈՒԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ շաբթու ամէն կողմ փնտուեցէք և կարդացէք տիեզերահոչակ գաղտնի ոստիկան



ՆԻՔ ՔԱՐԹԸԸՐԻ

Բոլորովին նոր և հետաքըքրաշարժ
արկածները



Հարկ չկայ Նիք ՔԱՐԹԸԸՐԸ Հայ հասարակութեան ծանօթացնելու որովհետեւ ամէն մարդ մեծ ու պղտիկ լսած է կամ զիտէ Նիք ՔԱՐԹԸԸՐԸ և ՆԱԹ ՓԻԵՅԵՐԸ ԲԻՆ անունները որ այնքան սկրտօրէն կազուած են ներկայ դարու ոստիկանական տարեգրութեանց հետ :

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄՐՑՈՒՄ ՄԸ

Այս օրը հեգնական ժպիտ մը կը թափառէր Փինքէր-թընի շրթներուն վրայ, մինչ լրազիր մը աչքէ կ'անցընէր գրասեղանին առջեւ նստած :

— Բոլ, կանչեց յանկարծ :

— Ի՞նչ կը փափաքիք, վարպե՛տ, ըստւ Բոլ, գրեթէ անմիջապէս բանալով սենեակին դուռը և կէս բացուածքէն ներս մացնելով գլուխը :

— Հետդ խօսիլ կ'ուզեմ...: Հոս եկուր և սա տարօրինակ ծանօթումին նայէ քիչ մը և ըսէ թէ կարծիքդ ի՞նչ է այս մասին :

Երիտասարդ ոստիկանին երկնցուց թերթին չորրորդ է-ջին վրայ խոչոր գիրերով տպուած ծանօթում մը: Բոլ գրասենեակին դուռը գոցեց, վարպետին մօտեցաւ, թերթը առաւ և բարձր ձայնով կարգաց հետեւեալ տողերը, որոնք սեւ լայն շրջանակի մը մէջ առնուած էին.

«ՈՒԾԱԴՐՈՒԹԻՒՆ».

«ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒԻ ԳՐԱՄԵՆԵԱԿ
«ՈՒԾԱԴՐՈՒԹԻՒՆ»

Ա. Բ Գ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

«Այս կարգի միակ Կանալը՝ մեւ ժամանակին մէջ.— Ոճացործներու հետապնդում, անձեռու վրայ գաղտնի հսկողութիւն.— Գաղտնիներու ուսումնահրութիւն և լուսաբնութիւն կրօնական սկզբունքներու համեմատ.— Մինչեւ այսօր անօրինակ յաջողութիւններ.— Զախառոր զին.— Արագ զործադրութիւն.— Գրասենեակներ. Մարֆ Մրիկը, 234, հինգերորդ ուրկ.— Ս. Մաֆ Պերրի, Տևորկնեալ:

Բոլ, որ նախապէս ապշութեան մատնուած էր, լրազի-

ըր դարձեալ գրասեղանին վրայ դրաւ։ Յետոյ վարպետին նայելով քահ քահ խնդաց։

— Ասիկա սովորական բան մը չէ, ըսաւ։ Պատույս վրայ կ'երդնում որ այսպիսի բան մը տեսնուած չէր և կը կարձեմ թէ, վարպե՛տ, այս մրցումին առջեւ աղէկ կ'ընենք եթէ մեր բեռները ժալենք և ուրիշ տեղ երթանք գործենք։ Մտածեցէք անզամ մը։ Ամէն մարդ պիտի վազէ զաղտնի ոստիկաններու այս զործակալութեան, որ կ'ենթազրեմ թէ Աստուածաշունչ ի ձեռին կը հետապնդէ ոճրագործները կրօնական սկզբունքներու համեմատ և հոգ կը տանի որ մոլորեալ ոչխարներու գլխի մէկ մաղին դպչող չըլլայ։ Հա՛, հա՛, հա՛ . . . , խնդալէս պիտի ճաթիմ . . . : Շատ ծիծաղաշարժ բան է և հանճար պէտք է այսպիսի անմտութիւններ հսարելու համար։

— Թերեւս նաև խիստ եղերերդական է, ըսաւ Փինքէրթըն գլուխը երերցնելով։

— Ասիկա զարմանալի պիտի ըլլար, շարունակեց Բոլա՛լ աւելի խնդալով։ Գաղտնի զործակալներու այս գրասենեակը անշուշտ իր գոյութիւնը կը պարափ խօսաբարոյ աղանդի մը, որ զայրոյթով գլխած պիտի ըլլայ թէ մենք՝ հասարակ ոստիկաններս՝ ձեռնոց չենք դներ Պ. Պ. գողերը բռնելու համար։ Անիկա իր պաշտպանութեան տակ կ'առնէ այս տարաբախտները։ Կը յուսայ չարիքին բորոտութենէն բժշկել զանոնք Աստուածաշունչի հատուածներ կարդալով անոնց։ Կը փափաքէի տեսնել Մր. Մաք Պէրրիի գլուխը։ Անիկա մեր դժողակ աշխատութիւններուն մէջ զրոսանք մը հայթայթելու համար ստեղծուած անսովոր մէկը ըլլալու է։

Այս անզամ Նաթ Փինքէրթըն գլուխը ծոհց ի նշան հաւանութեան։

— Իրաւունք ունիս, ըսաւ։ Պէտք է նայիլ թէ այս գործին տակը ի՞նչ կայ։ Կրօնքի վերարկուն խիստ շատ անգամ կը ծառայէ քօղարկել ամէնէն գարշելի ոճիրները։ Ասիկա աշխարհի չափ հին ծշմարտութիւն մըն է։ Եւ ծիշգ այս կրօնական սկզբունքներուն ցուցագրումն է որ խորհիւ կուտայ ինծի, մինչ դուն այնչափ կը ծիծաղիս։ Ա՛վ գիտէ թէ չարագործներու ընկերակցութիւն մը այս միջոցով մեծամեծ հասոյթներու աղբիւր մը ստեղծելու վրայ չէ։ Եթէ

այսպէս է, — և լրջօրէն պիտի զրազիմ այս գործով —, պիտի կրնամ արգիլել այս ինքնակոչ զաղտնի ոստիկաններուն մեքենայութիւնները։ Հակոռակ պարագային, իրաւունքն մեջ այս պիտի արգիլեմ իրենց եղեռնական և կ'ըսեմ, ես չեմ որ պիտի արգիլեմ իրենց եղեռնական և ինորհրդապաշտ գործ։ Դուն զիս աղէկ կը ճանչնաս և պիտի թէ այսպէս է։

Բոլ, վարպետին խօսքերը մտիկ ընելով, լուրջ երեւոյթ մը առած էր։ Կը հասկնար թէ Փինքէրթըն այս անգամ ալ իրաւունք ունէր և թէ իր պաշտօնին կարեւորութեանը գիրակից զաղտնի ոստիկանի պարագը կը կատարէր, թեթեւ տակից զաղտնի ոստիկանի պարագը կը ներդրէր, վերաբերում մը ցոյց չուալով այսպիսի բանի մը հանդէպ, վերաբերում մը ցոյց չուալով այսպիսի բանի մը հանդէպ, վերաբերում մը տակից թիւթի մը տակ կը ներդրուած է խորհրդական և ինորհրդական երեւոյթի մը տակ կը ներկայանար։

— Վարպե՛տ, ներում կը խնդրեմ ձեզմէ իմ անժամանակ զուարթութեանս համար, ըսաւ երիտասարդը, և կը խնդրեմ թոյլ տակ ինծի որ այս խնդրին քննութեանը համար ձեզի միանամ։

— Բայց անչուշտ, սիրելիս Բոլ։ Նոյն խոկ կ'ուզեմ քեզի թողուլ որ իրողութիւնները քննես և լաւ վախճանի մը զի թողուլ որ իրողութիւնները քննես ի վախուդ։ Դուն տեղեկութիւն սիխու տաս յանգեցնես ինքնի բայցուդ։ Դուն տեղեկութիւն սիխու տաս ինծի այդ գրասենեակին անդամոց արարքներուն, ինչպէս նաև անոր անօրէնին շարժումներուն վրայ։ Եւ կը յուսամ թէ աշխատութիւնը շուառով և աղէկ պիտի ըլլայ։

— Ի բոլոր սրտէ չնորհակալութիւն, վարպետ։ Աւելորդ է ըսել թէ կրցածս պիտի ընեմ։

Բոլ սենեակին դուրս ելաւ ուրախ զուարթ։ Հազիւթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . :

— Օր. Լէօնի Ֆրէնք, կարդաց զաղտնի ոստիկան։ Հաւանարար աղջիկն է այն Մր. Հէրբերտ Ֆրէնքին, որ շատ անարար աղջիկն է այն Մր. Հէրբերտ Ֆրէնքի ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . : Մինչեւ հիմակ ապասերաթէ մը ի վեր անհետացած է . . . :

Ծանուցաւած կինը ընդունելու համար սոքի ելաւ, խոնարհութիւն ըրաւ և աթոռ մը ներկայացուց։ Օր. Ֆրէնք

նստաւ և քողը վեր առաւ, երեւան բերելով գումատ և նորատի դէմք մը, երկու խոշոր կապոյտ աչքերով լուսաւորուած :

— Թերեւս խօսքը իմացած էք արդէն այն գործին, որուն համար հօս կուգամ, ըսաւ անուշ և ներդաշնակ ձայնով մը :

— Անշուշտ, խնդիրը ձեր հօրը անհետացումին վրայ է, պատասխանեց Փինքէրթըն: Եթէ չեմ սխալիր, այս դէպքը ութ օր առաջ տեղի ունեցած է :

— Այո՛, ըսաւ աղջիկը, որուն այտերը թեթեւ կարմը-րութիւնով մը ծածկուեցան :

— Ինչո՞ւ աւելի կանուխ չդիմեցիք ինծի :

— Պէտք էի դիմել և միտք ունէի...: Բայց խեղճ հօրս անհետամանալուն յաջորդ օրն իսկ այցելութիւնը ընդունեցի գաղտնի ոստիկաններու ուրիշ զրասենեակի մը անօրէնին: Անիկա այնչափ շատ ու այնչափ համոզիչ կերպով խօսեցաւ ինծի հետ որ վերջապէս գործը անոր յանձնեցի:

— Ա՛ն, ա՛ն, ըսաւ Փինքէրթըն հետաքրքրուելով: Կրնա՞մ հարցնել թէ ո՞րն է գաղտնի ոստիկաններու այն զրասենեակը, որուն անօրէնն է այդ անձը:

— «Արդարութիւն» կը կօչուի և ինծի եկող պարոնին անունն է Մաք Պէրը:

Վարպետը չկրցաւ զսպել զարմանքի բացագանչութիւն մը:

— Կ'էնթադրեմ թէ հիմակ ինծի եկած էք, որովհետեւ այդ զրասենեակը տակաւին ո՛ւ և է գնահատելի արդիւնք մը ձեռք ձկած չէ, այնպէս չէ՝ հարցուց:

Աղջիկը գուշիր ծուեց շփոթած:

— Կը խոստովանիմ օր այդպէս է, Մր. Փինքէրթըն, ըսաւ: Մր. Մաք Պէրը ամէն օր կը հաւաստէ ինծի թէ խեղճ հօրս հետքը դտած է, բայց իս ներքին համոզումս սա է թէ իր հետազօտութիւնը ո՛ւ է յառաջդիմութիւն չըներ: Ասկէ զատ, ամէն վայրկեան կարեւոր գումարներ կը պահանջէ ինձմէ, իբր թէ շարունակելու համար շատ սուզի նստող և շատ վասնդաւոր քննութիւններ: Հետզհետէ մտահոգութիւնս կ'աւելնայ: Մէկ խօսքով, այլեւս վատահութիւն չունիմ Մր. Մաք Պէրըի վրայ:

— Կը հասկնամ, Օր. Ֆրէնք, ըսաւ գաղտնի ոստիկանը:

որ մտահոգ եղած էր: Աղէկ ըրեք որ ինծի եկաք, թէեւ քիչ մը ուշ: Բայց բնաւ պէտք չէր որ ձեր գործը անոր յանձնէիք:

— Աւա՛ղ, պատասխանեց աղջիկը, պէտք չէր նոյն իսկ որ հօս գայի, որովհետեւ բացարձակապէս խոստացայ Մր. Մաք Պէրըի որ ուրիշ զաղտնի ոստիկանի չդիմեմ: Մասնաւորապէս ձեզմէ զգուշացուց դիս:

— Սա՛ նայէ, սա՛ նայէ...: Եւ ի՞նչ ըսաւ իմ մասին:

— Ըսաւ թէ ձեր գրասենեակը կորստեան և մեղքի վայր մըն է, թէ դուք մարդիկը խարելու արեւետին մէջ վարպետ եղած էք, թէ աւելի աղէկ էր անձնասպան ըլլաւ քան թէ գործ ունենալ ձեզի հետ...: Նոյն իսկ պարտաւոր էի Մր. Մաք Պէրըի աղանդին պատկանող մատուռին մէջ երգում ընել որ մարդու բան չըսեմ...:

— Իր աղանդին: Զեզի ըսաւ թէ կրօնական աղանդի մը կը պատկանի:

— Այո՛, և թէ այդ աղանդին կողմէ հաստատուած է իր գրասենեակը: Աւելցուց թէ Աստուած բարեհածած է հրաշքներընել իր պաշտօնեաններուն համար, որոնք արդէն գործի մը չեն ձեռնարկեր առանց աստուածային օգնութեան: Ասոր համար կը փափաքի որ իր յաճախորդները այդ աղանդին մաս կազմեն, զոնէ ո՛չչափ ժամանակ որ տեւեն իրենց հետազօտութիւնները, վասն զի անոնք նոյնչափ լաւ կը յաջողին որչափ եթէ երկու կողմերը սիասին աղօթեն յաջողութեան համար...: Իր կրօնական մոլեսանդութեամբ, երգում ընել տուաւ ինծի որ մօտերօ իր մատուռը երթամու Աստուածմէ ինդրեմ որ իր շնորհները ընծայէ մեզի...:

— Ահաւասիկ գուարճալի մարդ մը, ինչպէս կ'ըսէր Բոլքիչ մը առաջ, յայտարարեց Փինքէրթըն դլուխը երեցնելով: Ոճրագործները երեւան հանելու համար իր գործելու եղանակը առնուազն տարօրինակ է և շատ պիտի զարմանամ եթէ արդիւնքներ ձեռք բերած է արդէն այդ մէթոտով:

— Սակայն զարմանալի յաջողութիւններու վրայ խօսեցաւ ինծի:

— Անշուշտ: Զեր կրնար հակառակը ըսել ձեզի: Ուրեմն Օր. Ֆրէնք, ինծի եկած էք ձեր շահերը ինծի վստահելու և ինձմէ ինդրելու համար որ ձեր հօրը անհետացման վրայ քննութիւն կատարեմ:

— Այս՝ պատասխանեց աղջիկը և կը յօւսամ թէ պիտի չմերժէք:

— Այդ պարագային մէջ շարունակեց Փինքէրթըն պիտի խնդրեմ ձեզմէ որ ինծի հետ կատարեալ անկեղծութեամբ վարուիք և բան մը չծածկէք ինձմէ ինչ որ մասնաւորաբար ձեզի կը վերաբերի . . . : Խոռք կուտա՞ք:

— Անշուշտ: Ամէն բան անկեղծօրէն պիտի ըսեմ, որովհետեւ ձեզ տեսնելուս պէս հասկցայ թէ կրնայի բացարձակ վատահութիւն մը ունենալ ձեր վրայ Հարցուցէք, Մր. Փինքէրթըն:

— Շնորհակալ եմ: Մր. Հէրըլտ Ֆրէնք քանի՞ տարու էր:

— Յշտարու:

— Ո՞րչափ հարստութիւն ունի:

— Հօրս հարստութիւնը կրնայ երեք միլիոն տոլար հաշուուիլ, պատասխանեց Օր. Լէօնի քանի մը վայրկեան մտածելէ ետք:

— Գիտէ՞ք թէ Մր. Հէրըլտ կտակ մը թողած է և եթէ այդ կտակը գոյութիւն ունի, անոր տրամադրութիւններուն տեղեա՞կ էք:

— Այս՝ հայրս կտակ մը ըսած էր և ճշդիւ գիտեմ անոր բովանդակութիւնը:

— Կ'ենթադրեմ թէ, ըրաւ զաղտնի ոստիկանը ժպուլով, դուք անոր կտակընկալն էք:

Օր. Ֆրէնք գլուխը երերցուց:

— Կը սխալիք ըսաւ: Հայրս տոլար մը չի ձգեր ինծի: Մօրեզրօրդիս՝ Զարլի Թէլպօն ըրած է իր հարստութեան միակ ժառանգորդը:

— Ի՞նչպէս, պոռաց Փինքէրթըն: Սակայն դուք իր միամօր աղջիկն էք, այնպէս չէ՞:

— Արդարեւ իր միակ զաւակն եմ: Բայց պիտի բացատրեմ ինչ որ հոնելուկ մը կ'երեւայ ձեզի: Հայրս կը փափաքի որ ամուսնանամ մօրեզրօրդիս հետ, որուն նշանածն եմ արդէն: Առոր համար է որ իր ամբողջ հարստութիւնը անոր տուած է, պայմանաւ սակայն որ այդ հարստութիւնը ինծի պիտի պատկանի եթէ Զարլի մեսնի կամ իր խոստումը չպահէ:

— Բայց այն ատեն, Օրբորդ, տեսակ մը ըսնի ամուսնութիւն է ասիկա:

— Ամենեւ ին . . . Ընդհակառակը, մօրեզրօրդիս ու ես զիրար կը սիրենք և երջանիկ ենք որ իրարու հետ պիտի ամուսնանանք:

— Էա՞ւ, հիմա հասկցայ, ըսաւ զաղտնի ոստիկանը, ինքնիրեն կատարելապէս ինքնատիպ մարդ մը նկատելով անհետացողը, Զեր մօրեզրօրդիս նիւ Եօ՞րք կը բնակի:

— Ո՞չ, սպայ է և Քանառայի սահմանագլուխին վրայ ջոկատի մը կը հրամայէ: Արդէն այս մասին ըուռն վէճ մը ունեցած եմ Սպահանովութեան պետին՝ քննիչ Մաքքոնէլի հետ:

Նաթ Փինքէրթըն զաղտնապէս ժպտեցաւ: Աղջկան ըսեմքը կը գուշակէր:

— Մտածեցէք անգամ մը, շարունակեց Լէօնի Ֆրէնք, համարձակեցաւ Զարլիի վրայ կասկածիլ:

— Կարծած է թէ անկարելի չէ որ ձեր մօրեզրօրդիս մաս ունեցած ըլլայ ձեր հօրը անհետացումին մէջ:

— Այս՝ ձիշդ այդպէս: Եւ հակառակ իմ կորպի ընդդիմութեանս և զայրալից բողոքներուու, անիկան ձեռնարկեց հետազօտութիւններու, որոնք բնականաբար ո՛ւ և է արդիւնք չունեցան: Մօրեզրօրդիս իր պաշտօնին գլուխը զանուելուն համար տակաւին չէ կրցուծ զաւ, բայց հաւանաբար վաղը հոս պիտի ըլլայ:

Պահ մը լոռութիւն տիրեց: Գաղտնի ոստիկանը կը մտածէր իր լուսներուն վրայ:

— Այս ամէնը Մաք Պէրըի ըսի՞ք, հարցուց յանկարծ:

— Այս . . . և ասիկա թերեւու զաղափար մին է՝, բայց ինծի անանկ եկաւ թէ արդէն անիկա զրէթէ ինծի չափ տեղեակ էր այն բաներուն:

— Էսել է թէ առաջուընէ տեղեկութիւն առած էր, յայտարարեց Փինքէրթըն, որ կը հաստատուէր իր համոզույթի ամառարարեց Փինքէրթըն, որ կը հաստատուէր իր համոզույթի անձ մին մէջ թէ բարեպաշտ Մաք Պէրըի շատ կասկածելի անձ մին էր և որոշեց այս մասին քննութիւն մը կատարել: Մր. մըն էր և որոշեց այս մասին գլուխը զայ:

— Այս՝ իրեն ըսի թէ Զարլի վաղը կէս օրէն ետք կեղրունական երկաթուղինվ պիտի զայ:

— Ի՞նչ ըսաւ:

— Ըսաւ թէ կայարան պիտի երթար դիմաւորելու և անոր հետ պիտի զրաղէր այս գործով:

— Դուք ալ կայարան պիտի երթա՞ք ձեր մօրեղբօրդր-
դին դիմաւորելու:

— Շատ կ'ուզէի..., բայց Մր. Մաք Պէրրի կը պա-
հանջէ որ —եւ ասիկա ալ շատտարօրինակ կ'երեւայ ինծի—
ճիշդ այդ ժամուն մատուոք գտնուիմ աղանդին յարելու
համար: Ժամը հուկէսին բարեպաշտ եղբայր մը, ինչպէս
կ'ըսէ, պիտի գայ գտնէ զիս, խորանին առջեւ տանելու:

Փինքէրթըն թեթեւորէն սուլեց:

— Ձեր մօրեղբօրդրդին մէկ լուսանկարը ունի՞ք վրա-
նիդ, հարցուց:

— Այս՝, հրամմեցէք: Պիտի տայի Մր. Մաք Պէրրիի,
որ ինձմէ ինդրած էր:

— Արտօնեցէք որ քովս պահեմ: Եթէ ուզէք, ուրիշ մը
կուտաք այդ բարեպաշտ անձին:

— Բայց ո՛չ, չեմ ուզեր: Այդ մարդը ինծի վատահու-
թիւն չի ներշնչեր և մտադիր եմ իր մատուուն ալ չերթալ:
Կը յուսամ թէ ապագային մէջ այլ եւս գործ մը պիտի չու-
նենամ անոր հետ:

— Էնդհակառակը, Օր. Ֆրէնք, յայտարարեց գաղտնի
ոստիկանը հաստատուն շեշտով մը: Այդ մարդուն ձեզմէ
ուզածները պէտք է ընէք: Պատճառներ ունիմ կարծելու թէ
անիկա աղտոտ արհեստ մը ի գործ կը դնէ և պէտք է որ
վերջ մը տանք այդ մեքենայութիւններուն: Թերեւս այս
կերպով յաջողինք գտնել ձեր հօրը հետքը:

Էկոնի.Ֆրէնք գաղտնի ոստիկանին երեսը նայեցաւ զար-
մանքով:

— Պատրաստ եմ ընել, բաւա, ինչ որ խորհուրդ տաք
ինծի, նոյն իսկ եթէ չհասկնամ թէ ի՞նչ օգուտ պիտի ունե-
նայ: Ուրեմն աւելի ձշութեամբ ըսէք ինծի թէ ի՞նչպէս
պէտք է վարուիմ:

— Օ՛հ, դժուար չէ, շարունակեց գաղտնի ոստիկանը:
Նախ այդ Մաք Պէրրիին պիտի չմերժէք ձեր մօրեղբօրդրդին
լուսանկարը: Ուրիշ մըն ալ ունի՞ք:

— Այս՝, շատ ունիմ:

— Յետոյ սիրով պիտի ընկերանաք այն ջերմեռանդ

անձին, որ մատուռ պիտի տանի ձեզ: Հանգիստ եղէք, ցա-
ւալի բան մը պիտի չպատահի ձեզի, որովհետեւ ես ձեր
շատ մօտը պիտի ըլլամ: Վերջապէս կը ինդրեմ ձեզմէ որ
երկուող յանձնաբարական մը տաք ինծի ձեր մօրեղբօրդրդին
համար, ըսելով անոր թէ կատարեալ վատահութիւն թող
ունենայ իմ կամ օգնականներուս վրայ: Տեսէք, Օրիորդ,
կարեւորը սա է թէ Մր. Մաք Պէրրիի հանդէս այնպէս
վարուիք որպէս թէ ամենաբացարձակ վատահութիւն ունիք
անոր վրայ:

— Ասիկա շատ գժուար պիտի ըլլայ ինծի համար,
վասն զի կեզծել չեմ գիտեր, բայց նորէն կը յաւոամ թէ
յաջողիմ, բաւա էկօնի: Եթէ այդ մարդը անպարկեչու դի-
տումներ ունի, իմ ամենամեծ շահս կը պահանջէ որ դիմա-
կազերծ ըլլայ:

Խօսելով մէկտեղ, Նաթ Փինքէրթըն պատուհանին մօտե-
ցած էր: Հօն կեցաւ այնպիսի ձեւով մը որ վարագոյրին
տակ բոլորօվին պահուըտած ըլլայ և փողոցէն կարելի չըլլայ
զինքը տեսնել: Իր խորաթափանց աչքերով խճուզիին ամ-
բողջ երկայքը կը լրտեսէր և քիչ ետքը նշմարեց սեւեր
հագած բարձրահասակ մարդ մը, որ գանդազօրէն կը պատէր
դիմացի մայթին վրայ, առանց աչքէ կորսնցնելու իր տու-
նին դուռը:

— Բան մըն ալ բաեմ, Օր. Ֆրէնք, աւելցուց աղջկան
կողմը դառնալով, Մր. Մաք Պէրրի ապահովապէս պիտի
հարցնէ ձեզի թէ ինչո՞ւ իմ գրասենեակս եկաք:

— Բայց չզիտեր թէ եկած եմ, բաւա բոլորովին զար-
մացած: Կրնաք համկանակ թէ իրեն չըսի որ ձեզի զիմելու
միտք ունիմ:

— Ասիկա աեղեկացած է, շարունակեց Փինքէրթըն:
Կո՞մ լրտեսել կուտայ ձեզ և կամ թէ ինք անձամբ կը
լրտեսէ: Սա պատուհանին առջեւ եկէք և վարագոյրին ե-
տեւը կեցէք, որպէս զի փողոցէն չտեսնէ ձեզ:

Աղջիկը մօտեցաւ ապակիին:

— Ո՞վ է սեւեր հագած ու լայնեզր գլխարկ մը զրած
սա մարդը, որ փողոցին միւս կողմը հանդարաօրէն քաւելու
երեւոյթ ունի, հարցուց իր ուշադրութիւնը գրաւած մարդը
ցոյց տալով անոր:

— Աստուած իմ, պռոաց աղջիկը, սարսափահար ընկր-
կելով: Մր. Մաք Պէրրին է, իրաւունք ունիք: Բայց ի՞նչ-
պէս կրցաք գուշակել:

— Դժուար չէր: Հիմակ աղէկ ուշադրութիւն ըրէք,
Օր. Ֆրէնք: Եթէ այդ մարդը ձեզ հարցաքննէ, պէտք է բացէ
ի բաց պատասխանել իրեն թէ իմ գրասենեակո եկաք: Ա-
ւելցուցէք միայն թէ ես մերժեցի զբաղիլ ձեր գործով և
թէ մինչեւ իսկ կոշտ վարմունք մը ունեցայ երբ իմացայ
թէ զաղտնի ոստիկաններու ուրիշ գրասենեակի մը դիմած
էիք արդէն: Մի՛ ըսէք իրեն թէ այդ գրասենեակը ծանօ-
թացուցիք ինծի, այլ պնդեցէք իմ մերժումիս և սրանե-
ղութեանո վրայ, և այնպէս ձեւացուցէք թէ ինծի դէմ
զայրացած էք իմ հպարտութեանու և իմ անհաճոյ ընթաց-
քիս պատճառաւ: Ամէն բան ձեզմէ կախում ունի: Սհա՛ թէ
ինչու խիստ հարեւոր է որ ծշդիւ գործազրէք ինչ որ այս
պահուս կը խնդրեմ ձեզմէ:

Օր. Ֆրէնք խոստացաւ ձեռքէն եկածին չափ խաղալ
այս կատակերգութիւնը և զաղտնի ոստիկանին սենեակէն
մեկնեցաւ, քանի մը հրահանգներ ալ ստանալէ ետք այն
եղանակին վրայ, որով պէտք է վարուէր Պէրրի հետ:

Չափիւ թէ քանի մը քայլ առած էր փողոցին մէջ,
ծանօթ ձայն մը եկաւ ականջին:

— Օր. Ֆրէնք, կ'ըսէք այդ ձայնը, ուրախ եմ որ կրցայ
գտնել ձեզ: Ինքնիրմէս դուրս ելած եմ բոլորովին և չեմ
զիտեր ծշդիւ թէ ի՞նչ խորհիմ ձեր ընթացքին վրայ:

Աղջիկը գլուխը դարձնելով, իրեն ծիշդ քովը տեսաւ
Մաք Պէրրին: Մարդը յափշտակիշ թռչունի իր կիսագէմ-
քով, վայրագ աշքերով, սովորականէն աւելի գարշատեսիլ
երեւոյթ մը ունէր:

— Ի՞նչ եղաք, Մր. Մաք Պէրրի, հարցուց աղջիկը
երկշոտ ձայնովը տղու մը, որ կը զգայ թէ յանցանք մը
գործած է: Ո՞վ է որ այսչափ բարկացուցած է ձեզ:

— Դուք էք, պատասխանեց Մաք Պէրրի խստու-
թեամբ: Յատկապէս պատուիրած էի ձեզ չդիմել այդ Փին-
քէրթընին, վասն զի անիկա տիմարին մէկն է և միմիայն
կրնոյ դրամ շորթել անոնցմէ, որ կը խարուին իր ուշըլա-
մէն և երեւակայական շահատակութիւններէն: Եւ ահա կը

տեսնեմ որ անոր տունէն դուրս կ'ելլէք: Է՛ ուրեմն, քանի
որ այդպէս է, Օր. Ֆրէնք, բացարձակ կ'երպով կը մերժեմ
զբաղիլ ձեր շահերով: Վստահեցէք այդ Փինքէրթընին: Թող
անիկա ձեր գուլոր ունեցած դրամը ուտէ լնցնէ գուլով:

Լէօնի Ֆրէնք ընկճուած երեւոյթ մը առաւ, որ առա-
սած մը անգամ պիտի ողոքէր:

— Աւա՛զ, ըսաւ գրեթէ լալով, ո՞րքան իրաւունք ու-
նիք, Մր. Մաք Պէրրի, և ես ո՞րքան յիմար, անխոնեմ,
յանցապարտ եղայ այդ մարդուն տունը երթալով: Բայց ար-
դէն պատիմս կրեցի, որովհետեւ այնպիսի ընդունելութիւն
մը ըրաւ ինծի, զոր երրեք պիտի չկարծէի թէ կրնայ ընել
բարեկիրթ մարդ մը:

— Ի՞նչպէս, հարցուց Մաք Պէրրի յանկարծ հետաքըր-
քըրուելով: Անպատշած վարմունք մը ունեցաւ: Ի՞նչ կըր-
նայ ըսել ձեզի:

— Զախորդութիւն մը գոյ ծեցի իմացնելով իրեն թէ
զաղտնի ոստիկաններու ուրիշ գրասենեակի մը զիմած էի
արդէն: Ասիկա իմանալուն պէս բարկացաւ: Ըսաւ թէ իր
վրայ մեծ վստահութիւն մը ունենալու չի որ իրեն կը դի-
մէի կեանքս վրդովող դէպքէն ութ օր եաք և թէ ինք չէր
ուզեր ծառայել անոնց որ նախապէս չէին դիմեր իրեն:
Մէկ խօսքով, ճամբեց զիս գէպ այդ միւս զրասենեակը,
աւելցնելով թէ ինաւ չէր հետաքըրուեր իմ գործովս և
թէ ունէ պարագայի մէջ պիտի չստանձնէր զայն:

Մինչ աղջիկը հատկած ձայնով մը կը խօսէր, Մաք
Պէրրիի աշքերը կը պձատային: Դժուարաւ կը զապէր իր ու-
րախութիւնը:

— Ձեր դիմում ըրած զրասենեակին անունը տուի՞ք,
հարցուց:

— Ո՛չ, պատասխանեց աղջիկը: Եւ արդէն մանրամաս-
նութիւն չուզեց ինձմէ ու ձայրեց զիս ձայրայել կոշտու-
թեամբ:

Մաք Պէրրի սկսաւ հեգնել և բնլորովին հաճելի դէմք
մը առաւ նորէն:

— Այդ պայմաններուն մէջ ձեր գործը երեսի վրայ պի-
տի չձգեմ, ըսաւ: Ես ձէնթըլմէն մըն եմ, Օր. Ֆրէնք: Այդ
գինքէրթընին պէս չեմ վարուիր: Բնաւ չեմ մոռնորի յար-

գանքը, զոր պարտաւոր ենք ցոյց տալ տկար սեռին: Կըր-
նաք վատահիլ իմ աջակցութեանս վրայ:

Էէօնի ձիդ մը ըրաւ ձեռքը երկնցնելու և քաղցրու-
թեամբ պատասխանելու համար անոր:

— Շատ երախտապարտ եմ ձեզի, ըստւ, և կը խոստա-
նամ ձեզմէ զատ ուրիշի մը չվատահիլ տոկէ ետք: Կ'ազա-
չեմ, ներողաժիտ եղէք իմ անխորհուրդ դիմումիս: Հիմակ
ի վկաս ինծի հասկցայ թէ բարեկիրթ և կրօնասէր մարդու
մը խորհուրդներէն ազէկը չկայ:

Կեզծ բարեմտութիւն ցոյց տուող մարդը, որ յայտնա-
պէս ուրախ էր իր խարէութեանը զո՞ն եղող աղջկան արտա-
յայտած բարի զգացումներէն, շարունակեց կողմնակի ակ-
նարկ մը ձգելով անոր վրայ.

— Ի՞սել է թէ պիտի ընէք ինչ որ խնդրեմ ձեզմէ:

— Այո՛, ինչ որ խնդրէք, պիտի ընեմ կատարեալ վըս-
տահութեամբ, պատասխանեց թշուառ աղջիկը, որ այդ մառ-
դուն երեսը թքնելու փափաք մը կ'զգար:

— Ե՛ ուրեմն, թոյլ տուէք որ հրահանգներս կրկնեմ:
Վաղը, կէս օրէն ետք, ժամը 5.30ին միջոցները, իմ բա-
րեպաշտ եղբայրներէս մէկը պիտի զայ և մեր աղանդին
մատուռը պիտի տանի ձեզ: Խորանին առջեւ կ'երթաք,
ջերմագին աղօթք մը կ'ընէք և կը խոստանաք «Արդարու-
թեան» գրասենեակին հաւատարիմ մնալ ձեր գործին ամ-
բողջ տեւողութեանը համար: Իսկ ես ժամը 6ին կեղրոնա-
կան երկաթուղիին կայարանը պիտի երթամ ձեր մօրեղբօր-
որդի Զարլզ թէլպօթը դտնելու, զոր մատուռ պիտի բերեմ՝
Այդ երիտասարդ սպան հոն պիտի երկրպագէ և ձեզի հետ
պիտի աղօթէ խորանին առջեւ: Ասիկա ձեր գործին կուզա՞յ:

— Այո՛, կուզայ, հոգիիս բոլոր ջերմեռանդութիւնովը
պիտի աղօթեմ որպէս զի շուտով յաջողիք հայրո գտնել և
իմ գիրկս դարձնել զայն:

Մաք Պէրրի շատ զո՞ն մնաց այս պատասխանէն:

— Այս օրուան համար մնաք բարով, Օր. Ֆրէնք, ըստւ
ձեռքը աղջկան երկնցնելով, Եթէ ձեզի հաղորդելիք բան մը
ունենամ տակաւին, վաղ առառ կը հաղորդեմ, հակառակ
պարագային պատրաստ գտնուեցէք կէն օրէն ետքը Ժ. 30ին:
Էէօնի խոստացաւ ճշդապահ ըլլալ և Մաք Պէրրի բաժ-

նուեցաւ անկէ, Հինգերորդ ծառուղիէն մինչեւ Մաք
Սթրիթ երթալու համար, ուր կը գտնուէր իր գրասենեակը:

Հօն հասնելով, վերելակ նստաւ և հինգերորդ յարկը
ելաւ: Իր գրասենեակին զրան առջեւ մարդ մը տեսաւ, որ
սորփի և կռուփի կրկնակի հարուածներ կուտար տախտա-
կամածին, դիւահարի մը պէս հայնոյելով վարձակալին բա-
ցակայութեանը համար: Ծերունի նաւազ մըն էր, լայն
թիկնոց մը հագած, ոտքը խոչը կօշիկ մը անցուցած: Բա-
ւական զէշ հոտով հողէ ծխամորջ մը կը ծխէր: Մաք Պէրրի
իսկոյն անոր մօտը գնաց:

— «Արդարութեան» գրասենեակը ա՞ս է, պոռաց նա-
ւազը վերջին հայնոյութիւնով մը:

— Այո՛: Գո՞րծ մը ունիք:

— Հարկաւ գործ մը ունիմ: Թերեւս տնօրէնը դուք էք:

Արդարեւ ես եմ: Անունս Մաք Պէրրի է, տնօրէն
«Արդարութեան» գրասենեակին:

Մաք Պէրրի, խօսելով մէկաեղ, դուռը բացած էր և
ինդրեց այցելուէն որ ներս մանէ: Նաւազը առաջին հան-
դիպած աթոռը առնելով նստաւ առանց քաշուելու:

— Ե՛: ուրեմն, տեսնենք խնդիրը ի՞նչ բանի վրայ է,
հարցուց տնօրէնը, որ իր սեղանին առջեւ նստած էր:

— Կայծա՛կ, պոռաց նաւազը: Կատարեալ վստահու-
թիւն ունիմ ձեր վրայ, վասն զի «Արդարութիւն» կը կոչ-
ուիք: Ինձի օգնել կ'ուզէ՞ք:

— Իմ ուզածս ալ աղ է, պատասխանեց Մաք Պէրրի:
Բայց նախ պէտք է գիտնամ թէ խնդիրը ի՞նչ բանի վրայ է:

— Անշուշտ: Խնդիրը պիտի պատմեմ ձեզի: Ես որ ձեզի
հետ կը խօսիմ, քոյր մը ունեցած եմ որ գեղեցիկ..., ար-
ձանի մը պէս գեղեցիկ էր: Կը զարմանաք, հէ՛, ձերունի:
Ե՛ ուրեմն, երէկ միայն դարձայ արեւմտեան Հնդկաստանէն
և քիչ մնաց որ պիտի մեռնէի երբ իմացայ թէ իմ սիրեցեալ
պղտիկ Մէրիս գաղբա՛ծ էր ապրելէ: Կը հասկնա՞ք: Կայ-
ծա՛կ, մեռեր է սպաննուած, Սպաննուա՛ծ, կ'ըսեմ ձեզի և
սա էշ սատիկաններէն ո՛չ մէկը չկրցաւ սպանիչը գտնել:
Սպատուհի էր վաճառական Նօրթընի քով, Երրորդ Ծառու-
ղին: Իր սենեակին մէջ զտեր են դաշունահար սպաննուած:
Ոստիկանութիւնը այլևս չզբաղիր ալս գործով: Մարդաս-

պանը ընաւ պիտի չգտնուի, անէ՞ք: Բայց երդում ըրի անոր վրէժը լուծել և ասոր համար է որ եկած եմ գնուռելու հարպիկ ոստիկան մը, որ ձեռք անցընէ Մէրիի թշուառական սպանիչը: Հազո՞ր անէ՞ք:

— Եցուն վարձք մը պիտի տա՞ք, հարցուց Մաք Պէրրի:

— Ես հարուստ չեմ, պատախանեց նաւազը: Բայց խնայութիւններ ունիմ և հինգ հարիւր, և նոյն իսկ հազար տոլարին պիտի չնայիմ, երբ այդ գարշելի արարածը գտնեն:

— Կը ցաւիմ, ըսաւ Մաք Պէրրի, բայց այնչափ զրազած եմ որ չեմ կրնար ձեր գործը ստանձնել: Գաղտնի ոստիկաններու ուրիշ գրասնեակի մը դիմեցէք:

Նաւազը ոտքի ելաւ զայրոյթով:

— Ի՞նչպէս, պոռաց կռոոփի ուժգին հարուած մը տառվ սեղանին: «Արդարութիւն» կոչածնիդ ա՞գ է, անէ՞ք: Եթէ առաջ հազար տոլար տայի, ամենայն սիրով պիտի ստանձնէք գործս: Եւ կը ճամրէք զիս, որովհետեւ խեղճ մարդ մըն եմ և հազար տոլար միայն կրնամ տալ ձեզի: Զեր արդարութիւնը սիրուն է, սրիկանե՛ր, ասպատակնե՛ր, ծովահեննե՛ր:

— Բաւակա՞ն է, պոռաց Մաք Պէրրի, որ ոտքի ելած եր և գուռը կը ցուցնէր նաւազին: Անմիջապէս գուրս ելէք:

— Կ'երթամ, կ'երթամ, ըսաւ նաւազը: Բայց հանդարտ եղէք, ձերուկս, հոգ պիտի տանիմ ձեր գրասնեակը յանձնարարելու:

Եւ գուրս ելաւ, գուռը ուժգնապէս գոցելով իր ետեւէն և հրաժեշտի տեղ իր ամէնէն ընտրեալ հայնոյութիւնները տեղացնելով, որոնց վրայ Մաք Պէրրի խնդալէ զատուրիշ բան չըրաւ արդէն:

Բարի նաւազը վերելակ նստաւ վար իջնելու համար և փողոց ելլելուն պէս կառք մը կանչեց, որ զինքը տարաւ Փինքէրթընի տունը: Բօլ Բէրիէ զինքը ընդունեց և ողջունեց յանուն վարպետին, վասն զի այդ նաւազը, — ինչպէս որ ընթերցողները գուշակեցին թերեւս —, նոյն ինքն նախ Փինքէրթընն էր:

— Իրաւունք ունէի, ըսաւ զաղանի ոստիկանը: Կ'երեւի թէ «Արդարութեան» գրասնեակը ոճրագործներէն

տարրեր բան կը հետագնեէ: Մաք Պէրիի քովէն կուզամ եւ անմիջապէս տեսայ որ այդ ստահակը խոշոր գումարներ ձեռք ձգելու համար միայն կ'աշխատի: Հոգը անդամ չէ որ խեղճ մարդկութիւնը ազատէ իր տառապանքներէն, փրկելով զայն գողերէ և մարդասպաններէ: Մեծ յօյս ունիմ թէ շուտով արգելք պիտի Ալանք այդ խարերային ազատու ասպարէզին: Գալով քեզի, սիրելիս Բօլ, վազուան համար բաւեկան ապերախտ և դժուարին դործ մը վերապահած եմ գեղի: Քանի մը ժամաւան համար պիտի փոխակերպուիք երիտասարդ սպայի մը, որ քանի մը միլիոնի ժառանգորդ է և անոր գերը պիտի կատարէք պէտք եղած կերպով:

Բօլ պատախանեց գոհուսակութեան աղւոր ժպիտով մը և պայքարի յատակագծին վրայ քանի մը յաւելուածական տեղեկութիւններ ուղեց իր վարպետէն:

ՍՈՍԿԱԼԻ ԽՈՐԱՆԸ

Յաջորդ օրը, կէս օրէ ետք ժամը հինգը քեչմը անցած, վայելուչ կերպով հագուած պարոն մը Օր. Լէօնի Ֆրէնքի տունը գնաց և այցաքարդը զրկեց: Իսկոյն ներս տարուեցաւ և մտաւ զետնայարկի մեծ որանը, ուր Լէօնի կը գըտնուեր մեկնելու պատրաստ:

— Ո՞րչափ երջանիկ եմ ձեզ տեսնելուս համար, Մր. Փինքէրթըն, ըսաւ ուրախութեամբ, ձեռքը զաղոնի ոտոիկանին երկարելով: Սիրտս սկսած էր ուժգնորէն բարախնել, վասն զի կը մօտենայ վայրկեանը, ուր «բարելաշտ եզրայը» պիտի զայ և մատուռ պիտի առաջնորդէ զիս: Անհաւատավախի մը ունիմ և եթէ ձեզի խոստացած ՀԱԱայի որ ամէն բանի մէջ ձեր խործուրդներուն պիտի հետեւիմ; կը խոստովանիմ թէ պիտի մերժէի կատարել այս վանդաւոր ուխտագնացութիւնը:

— Բնաւ հոգ մի՛ ընէք. Օր. Ֆրէնք, պատախանեց գաղտնի ոստիկանը: Մօտէն պիտի հետեւիմ ձեզի: Աչքէ պիտի չնեռացնեմ ձեզ: Զեղի հետ մէկտեղ միեւնոյն ատեն մատուռը պիտի զանուիմ և պիտի չթողում որ ամենափոքր տաղուոկի մը ենթարկուիք,

Այս ապահովիչ խօսքերուն հակառակ, աղջիկը, որ
կ'անգիտանար թէ Փինքէրթըն ո՛ր աստիճան ճարտար և
քաջասիրտ էր, չէր յաջողեր յաղթել իր սարսափին:

— Մաք Պէրրիի կողմէ զրկուած մարդը դալուն պէս,
շարունակեց գաղտնի ոստիկանը, հոս բերել տուէք զայն,
կ'աղաչնմ, և հարցուցէք թէ մատուոը ո՛ւր կը գտնուի:
Պիտի զարմանամ եթէ ճիշդ պատասխան մը տայ ձեզ! : Բայց
հոգ չէ: Իր խօսքերը թերեւս զեկուցում մը պիտի ըլլան
ինծի համար և թոյլ պիտի տան որ ամենակարծ ճամբով
հասնիմ հոն:

Լէօնի խոստացաւ գործադրել իր ուզածները: Քանի մը
վայրկեան ետք, դարձեալ դուռը զարնուեցաւ և Փինքէր-
թըն փութով պահուըրտեցաւ վառարանին ջերմարդելին ետեր:

«Բարեպաշտ եղբայրը» ներս մտաւ: Խոշոր մարդուկ
մըն էր, կըսկըս և անպեխ, խորամանկութիւն և նրբա-
մտութիւն ցոլացնող աշխերով: Սեւեր հազած էր, բոլորո-
վին գոց բըտէնկօթով մը, և լայնեզր գլխարկ մը դրած էր
Մաք Պէրրիի պէս: Ներս մտած ատեն խորին խոնարհու-
թիւն մը ըրաւ և անուշ շեշտով մը ըստ լէօնիի.

— Ողջոյն ձեզ ի Տէր, ազնիւ Օրիորդ: Մեր Միարա-
նութեան պէտին հրամաններուն համեմատ, եկած եմ ձեզ
առնելու և մատուու տանելու, ուր ձեր աղօթքը պիտի ընէք: :
Բայց ամէն բանէ առաջ պարտաւոր եմ ձեզի հարցնել թէ
աղէկ որոշած էք մեզի հետ ըլլալ ձեր բոլոր սրտովը և
քոլոր հոգիովը:

— Ամբողջովին ձեզի հետ եմ, պատասխանեց լէօնի,
որուն սիրտը ուժգնորէն կը բարխէր:

— Ուրեմն եկէք, սուրբ մատուուը պիտի տանիմ ձեզ:

Լէօնի հայելին մօտեցաւ որպէս թէ զմխարկը շտկելու
համար և անտարբեր դէմքով մը հարցուց.

— Ո՞ւր կը գտնուի այդ մատուուը:

— Զեմ կընար ճշդիւ ըսել տեղը, պատասխանեց մար-
դուկը: Նախ և առաջ պէտք է որ մեր աղանդին անգա-
մակցիք ձեր աղօթքներով և մաղթանքներով: Մենք շար-
թչնամիներ ունինք և պարտաւոր ենք զգուշութիւններ ը-
նել: Աստուած իսկ կ'արգիլէ մեզ մեր բարեպաշտական
հաւաքումներուն վայրը իմացնել անոնց որ մեր սուրբ

Միարանութեան չեն մասնակցիր: Բայց կը կարծեմ թէ չէք
վախնար, Օր. Լէօնի:

Աղջիկը գլուխը երերցուց և փորձեց ժպտիլ, բայց չյա-
ջողեցաւ:

— Զեմ վախնար, պատասխանեց: Բայց որտի բարա-
խում կը զգամ, ինչ որ շատ բնական է:

— Ո՛հ, շարունակեց մարդը քաղցրութեամբ, ատիկա
շուտով պիտի անցնի և խաղաղութիւնը պիտի մանէ ձեր
որտին մէջ:

Փինքէրթըն, ջերմարդելին ետեւ անշարժ կեցած, ոս
տպաւորութիւնը ունեցաւ թէ այս խօսքերը սոսկալի երկի-
մարտ մը կը պարունակէին: Ինքզինքը զսպեց թաքսոսցէն
դուրս չելլեւու և այս երկդիմի խօսքին բացատրութիւնը
չպահանջելու համար:

— Եկէ՛ք, կընկեց մարդը: Հոս՝ մօտը, կառք մը կը
սպասէ մեղի:

Լէօնի վեհերու և անձկալից ակնարկ մը ձզեց ջերմար-
դելին վրայ: Յետոյ, ինչպէս կ'ըսեն, քաջութիւնը ձեռք
առաւ և «բարեպաշտ եղբայր»ին հետեւեցաւ: Տունէն դուրս
ելան և աւելի ամայի փողոց մը մտան:

Գաղտնի՝ սոտիկանը անոնց ետեւէն դուրս ելած էր և
սոտուերի մը պէս կը հետեւէր զոյգին, մերթ կառանցիկ
գրան մը տակ և մերթ դուրս ցցուած պատի մը ետեւ պահ-
ուըտելով, վասն զի դիտած էր թէ բարեպաշտ առաջնորդը
յաճախ ետին կը գառնար ու կը նայէր: Խնդիրը չտեսնուե-
լուն վրայ էր և Փինքէրթըն այս կարգի խուսափումներու
մէջ վարպետ եղած էր, որով մարդը բնաւ չնշմարեց իր
ներկայութիւնը:

Վերջապէս խոտորնակ ֆողոցի մը մէջ դարձաւ, ուր
կառք մը կը սպասէր: Այսչափ խորհրդաւորութիւն շատ
կասկածելի կ'երեւար լէօնիի, որ ակամայ ետին դարձաւ,
յուսալով նշմարել Փինքէրթընը:

Բայց գաղտնի սոտիկանը լաւ պահուած էր և խեղճ
աղջկան սիրտը սեղմուեցաւ: Ետ դառնալու փորձութիւնը
ունեցաւ պահ մը և քաջութեան ու կամքի ոյժով միայն
որոշեց աւելի հեռուն ընկերանալ խորհրդաւոր անձին:

— Տէր Աստուած, կ'ըսէր ինքնիրեն, եթէ Մր. Փինքէրթն աչքէ կորսնցուց մեզ..., եթէ չյաջողի մեր հետքը գտնել նորէն, ի՞նչ պիտի ըլլամ...:

Ամէնէն սոսկալի գաղափարները յղանալով, հասաւ կառքին մօտ, — հին կառք մը, որ առնուազն անցեալ դարէն մնացած էր և սնտուկի մը ձեւը ունէր:

— Մատո՛ւա, ըսաւ առաջնորդը կառապանին, որ քաղաքավարութեամբ ողջունեց աղջիկը և դռնակը բացաւ:

Լէօնի վայրկեան մը եւս վարանեցաւ և ակնարկ մը ձգեց ետեւը: Փինքէրթնէն ո՛և է հետք չկար: Առաջնորդը անոր վարանումը նշմարելով, ձեռքէն բռնեց և կառք նստելուն օգնեց: Յետոյ ինք ալ ներս մտաւ և դէմը նստաւ:

Կառքին մէջ խորին մթութիւն մը կը տիրէր: Լէօնի ջղաձգօրէն բռնեց զրպանին մէջ պահած փոքր աարձանակը, որոշած ըլլալով իրեն ընկերացազին վրայ պարպել, եթէ անիկա կասկածելի ամենափոքր շարժում մը ընէր:

Չիերը որարշաւ մեկնեցան փողոցին խորդուբորդ քարայատակին վրայէն և կառապանը ամէնէն մութ և ամէնէն ամայի փողոցներէն անցուց զանոնք: Աղջիկը շարունակ կը դիտէր պատուհանէն: Կը զգար թէ վհատութիւնը հետզհետէ կը պաշարէր զինք, հաստատելով որ քաղաքին այս թաղը բնաւ չէր տեսած: Եւ Փինքէրթընը նշմարելով, անմիջապէս համոզուեցաւ թէ անիկա վերջնապէս կորսնցուցած էր իրենց հետքը: Կառքին ետեւը չէր տեսներ ո՛չ ուրիշ կառք մը և ոչ վազող մը. և ինքզինքը մեծ վտանգի մը մէջ կը նկատէր, քանի որ գաղանի ոստիկանը հոն չէր այլ ես:

Ծարժելու ոյժ չկար վրան, ապա թէ ոչ կառքէն դուրս պիտի ցատկէր և իր տունին ճամբան պիտի բռնէր: Մարդը դէպ իրեն ծռեցաւ, իր հեւացող չնշառութիւնը լսելով:

— Կը վախնա՞ք, Օր. Ֆրէնք, հարցուց:

— Մտահագ եմ, խոստովանեցաւ աղջիկը: Կառապանը շա՞տ անծանօթ փողոցներէ կը տանի մեզ:

— Ամէնէն կարձ ճամբէն կ'երթայ և քիչ ատենէն պիտի հասնինք: Կ'երդնում ձեզի թէ վախնալու պատճառ մը չունիք: Երբ մեր խորանին առջեւ ծնրադրէք և աղօթէք, ձեր հոգին պիտի խաղաղի՞ վերջապէս:

Այս անդամ Լէօնի ալ նախզգացում ունեցաւ թէ այս

խօսքը աղետալի նշանակութիւն մը ունէր: Եւ արդէն կանթեզի մը լոյսով, որուն առջեւէն կ'անցնէր կառքը այդ վայրկեանին, տեսաւ իր դէմը նստող մարդուն երեսը և անոր վայրագ հեղնութեան արտայայտութենէն սարսուաց:

Հիմա սարսափի ծայրայեղ աստիճանին հասած էր, բայց աննուած կորով մը կ'զգար և ալ տւելի ոյժով կը սեղմէր իր պղտիկ ասրճանակը, որոշած ըլլալով պարպել զայն ո՛և է մէկուն վրայ, որ թշնամական դիտումներ ունենար:

Սպահով պիտի ըլլար եթէ գիտցած ըլլար թէ Փինքէրթըն վայրկեան մը իսկ հեռացած չէր իրմէ եւ թէ, երբ ինք կառք կը նստէր, անիկա ամէնէն մօտ փողոցին անկիւնին ետեւը պահութածած էր: Յետոյ կառքին հեռացած պահուն անոր ետեւէն վազած և հասած էր ու սոնակի մը (տիեկի) մը վրայ ելլելու յաջողած էր:

Այս կերպով կատարեց ճամբորդութիւնը աւելի ապահովութեամբ, եթէ ոչ աւելի հանգստօրէն, քան եթէ վարձու կառք մը բռնէր: Մարդէն կ'անցընէր թէ տարարտիստ աղջիկը որքան անձկութեան մատնուած էր և շատ կը փափէր իր ներկայաւթիւնը իմացնել անոր: Բայց ասիկա վտանգաւոր էր: Քամբերը պիտի կրնար լսել և կարեւոր էր անոր կասկածը չարթնցնել: Ուստի Փինքէրթըն համակերպեցաւ թողելու որ Լէօնին տառապի: Յոյս ունէր թէ իր պաշտպանեալը բաւական քաջ պիտի ըլլար իր դերը մինչեւ վերջ խաղալու համար:

Կնք շատ աղէկ գիտէր կառքին անցած բոլոր փողոցները: Դիտեց թէ կառապանը հազարումէկ շրջաններ կ'ընէր և վերջապէս կը հանէր մթաստուեր պղտիկ փողոց մը, որ ուղղակի նաւահանգիստ կը տանէր: Հոն իր ձիերուն քայլը մեղմացուց: Գաղտնի ոստիկանը, բնազդաբար հասկնալով թէ նպատակին կը մօտենացին, կառքէն վար ցատկեց և կառանցիկ դրան մը տակ պահութանցաւ:

Արդարեւ ճիշդ ժամանակն էր: Կառքը կեցաւ յաջորդ տունին առջեւ: Կառապանը աթոռակէն իջաւ և գռնակը բացաւ: Բարեպաշտ առաջնորդը զուրս ելաւ և Օր. Ֆրէնքի օգնեց որ վար իջնէ:

— Ահա եկանք, Օր. Ֆրէնք, ըսաւ: Այս վայրը, որ կը խոստովանիմ թէ քիչ մը մթին և ամայի է, թող վախ չը

պատճառէ ձեզի: Մտածեցէք թէ տակաւին խեղճուկ աղանդառներ ենք և թէ պէտք է որ ժամանակ մը համբերենք մինչեւ որ կարենանք աւելի պատշաճ թաղի մը մէջ զեղեցիկ և մեծ եկեղեցի մը շինել:

Լէօնի չպատասխանեց: Չորս դին կը նայէր դողդղալով և դէմքը տժգունած էր մեռելի մը դէմքին պէս:

— Հիմա գացէք ձեր զիտցած տեղը, ըսաւ առաջնորդը կառապանին և բերէք Մր. Զարլզ Թէլպօթը և Մր. Մաք Պէրրին: Աճտպարեցէք, վասն զի կառափումը յամը Եին կայարան կը մոնէ և այդ պարոնները հաւանաբար ձեզի կը սպասեն արդէն: Կառապանը գլխովը նշան մը ըրաւ, աթոռակին վրայ նոտաւ ու մեկնեցաւ սրբնթաց կերպով: Լէօնի կը քննէր այն տխուր շէնքը, որուն առջև կը գանէք:

— Այս տեղն է, հարցուց դողդոչուն ձայնով մը: Բայց ի սէր Աստուծոյ, մատուռ չկաջ հոս: Ասիկա տպրանքներու մթերանոց մը, կամ անոր պէս բան մըն է:

— Իրաւունք ունիք, Օր. Ֆրէնք: Արդարեւ ապրանքներու մթերանոց մըն է և մենք պէտք է անցնինք մէկ ծայրէն միւսը, վասն զի մեր մատուռը բակին մէջ կը գըտնուի, շէնքին ետեւը: Մի՛ վախնաք, այն տեղ կատարեալ ապահովութեան մէջ էք: Ետեւէս եկէք:

Աղջկան ձեռքէն բռնեց և շէնքին դրանը երեք հարուածներ տուաւ կարճ մթլոցներով:

— Ո՞վ է ան, ըսաւ ձայն մը ներսէն:

— «Արդարութեան» սուրբ աղանդին մէկ եղբայրը, պատասխանեց առաջնորդը:

Տարիներէն սեւցած զուռը բացուեցաւ այն ատեն և մարդուկը ներս մտաւ, իր ետեւէն քաշելով Լէօնին, որ բնազդաբար կը դիմադրէր:

— Մատուռը կարգի՞ն է, Բէգրօ, հարցուց դուռը բաշող մարդուն:

— Այո՛, պատասխանեց Բէգրօ անսովոր ակնարկ մը ձգելով Լէօնիի վրայ: Մոմերը վառուած են: Ամէն բան պատրաստ է աղօթքի համար:

— Լա՛ւ: Հոս կեցիր: Քանի մը վայրկեանէն ներս պիտի մտցնես Մր. Մաք Պէրրին և երիտասարդ սպայ մը:

— Կ'սպասեմ անոնց, պատասխանեց Բէգրօ:

Առաջնորդը դրան մօտ գանուած պղտիկ սեղանի մը վրայէն գողի լապտեր մը առաւ և Օր. Ֆրէնքէն ինդրեց որ իրեն հետեւի: Խեղճ աղջկէր, աւելի մեռած քան կենդանի, միշտ ջղաձգօրէն կը սեղմէր շրջազգեստին զրպանին մէջ գտնուած ատրճանակը, վասն զի համոզուած էր թէ շատ չանցած հարկ պիտի ըլլար գործածել զայն:

Առանց խօսք մը ըսելու հետեւեցաւ մարդուն: Անցան երկար մթերանոցէ մը, սնառուկներով, պարկերով և ամէն տեսակ հին կարասիներով լեցուած, որոնց մէջտեղ նեղ անցք մը կար, որ շէնքին միւս կողմը կը տանէք զիրենք:

Լէօնի չէր տարակուսեր այլիւս թէ Փինքէրթըն կորսընցուցած էր իր հետքը և ինքինքը դատապարտուած կը զգար, վասն զի առաջնորդին և Բէգրօյի մթչեւ փոխանակուած չարամիտ ակնարկները դիտած էր:

Մթերանոցէն անցնելէ ետք, մարդը դուռ մը բացաւ և մտան մեծ բակ մը, որ մթերանոցին պէս խճողուած էր ամէն մեծութեամբ սնառուկներով և կարասիներով: Ժամանակ մը քալեցին այդ ապրանքներուն մէջէն: Ցետոյ վերջապէս խիստ անխնամ թողուած լայն մարմանդ մը տեսնուեցաւ, որուն շուրջը բարձր պատեր կային: Այդ մարմանդին մէջտեղ աւերակ շէնք մը կը գտնուէք:

— Ահաւասիկ եկանք, յայտարարեց առաջնորդը: «Արդարութեանոյ մատուռը ալս է: Մտէք և սեղանին առջեւ ելէք: ուր պիտի ընէք ձեր աղօթքը:

Փտած տախտակներով զուռը բացաւ և Լէօնի մտաւ տկարօրէն լուսաւորուած պղտիկ մատուռ մը: Ո՛չ ինք և ոչ իր ընկերը մուտքի աջակողմի փոքր օթեակին մէջ չնշմարեցին պատին առջեւ կեցած և շունչը բռնած մէկը, որ Նաթ Փինքէրթընն էր:

Արդարեւ գաղտնի ոստիկանը լսած և հօսկցած էր իւրաքանչիւրը այն խօսքերուն, զորս առաջնորդը աղջկան և կառապանին ըսած էր, կառքէն իջած պահուն:

Այս կերպով հասկցած էր թէ մատուռը կը գտնուէք բակին ծայրը, տունին ետեւ: Ռւզեց առանց յապազելու երթաւ և այդ տեղը ուսումնամիրել: Արդարեւ եթէ տունը կամ մթերանոցին մէջ գտանդ մը կ'սպասնար աղջկան, միշտ անոր օգնելու վիճակի մէջ պիտի ըլլար բակէն մանե-

լով այդ շենքը: Իր յատակատեսութիւնովը շատ ժամանակի պէտք չունեցաւ այս ամէնը հասկնալու համար:

Ուստի փութած երթալ այն տունը, որ ապրանքներու մթերանոց ծառայող շենքին յարակից էր:

Բանալիներու տրցակ մը հանեց գրապանէն և քանի մը հատը փորձեց դրան փականքին մէջ, որ բարեբախտաբար սովորական շինուածք մըն էր և խիստ դիւրաւ տեղի տուաւ:

Այն ատեն գազոնի ոստիկանը ներս մտաւ առանց ամենափոքր ազմուկի և դուռը վրայէն գոցեց: Եւ եկորական լապտերը վառեց և նշմարեց երկար և մթին նրբանցք մը; որ ուղղակի գծով կ'երթար մինչեւ տունին ծայրը: Անմիջապէս հոն գնաց և բակին դուռը գտաւ: Այդ դուռը բանալիով գոցուած չէր, ինչ որ արդէն արգելք մը պիտի չըլլար Փինքէրթընին համար: Բայց ասով ժամանակ շահեցաւ: Դուռը բանալով բակը մտաւ: Զախ կողմը, բարձր պատ մը կը բաժնէր այդ բակը յարակից շենքին բակէն, ուր պէտք է գտնուէր մատուար:

Փինքէրթըն մինչեւ այդ պատին գագաթը մագլցեցաւ և վրայէն նայեցաւ ուշադրութեամբ: Արդարեւ յարակից բակին ծայրը տեսաւ խարխուլ հին աշտարակ մը.

Գազոնի ոստիկանը, որուն փիզիքական ոյժը կը հաւասարէր իմացական ոյժին, ակնթարթի մը մէջ պատէն անցած և միւս կողմը ցատկած էր կատուի մը թեթեւութեամբ:

Այն ատեն իր առջեւը տեսաւ մատուար, որուն պատուհաններէն տկար լոյս մը կը մազուէր: Արդէն թեթև ազմուկ մը կը լսէր ետեւէն և իր կողմը ուղղուած լուսաւոր ճառագայթ մը կը տեսնէր, որոնք ստոյդ նշաններ էին թէ Լէօնի և առողջնորդը կը մօտենային:

Գազոնի ոստիկանը կամացուկ մը բացաւ դուռը և աշաբարակին ներսի կողմը նայեցաւ: Մարդ չկար: Ներս սըպըրդեցաւ, դուռը գոցեց առանց ազմուկի եւ մուտքին աշակողմը, մութ խորշի մը մէջ պահութեցաւ: Պատրաստ բռնած էր իր երկու ատրանակները եւ լախտը, ամէն հաւանականութեան դիմադրելու համար:

Բանի մը վայրկեան ետք Լէօնի ներս մտաւ բարեպաշտ

առաջնորդին հետ: Աղջիկը շատ տժգոյն էր, բայց մատուախն կէս մթութեանը մէջ գժուարաւ կարելի էր որոշել իր ազւոր դէմքին շրջագիծերը: Խորանին մօտեցաւ, յետոյ, յանկարծ, սոսկումի ենթարկուելով, մատուախն մէջաեղը, կեցած տեղւոյն վրայ գամուեցաւ մնաց:

Իր դողլոչուն մատովը ցոյց կուտար խորանը, երկու մոմերով լուսաւորուած, որոնց սեւորակ նշոյլը աղետալի լոյս մը կը տարածէր: Մեռելի երկու գլուխներ կ'երեւէին այդ կէս մթութեան մէջ և տարարախտ աղջիկը կը սարուար զանոնք դիտելով:

— Մի՛ վախնաք, Օր. Լէօնի, ըստւ անդամ մըն աւ բարեպաշտ առաջնորդը, աղջկան ձեռքը բանելով: Ձե՛ղ տեսնեմ, խորանին աստիճաններէն վեր ելէք, ծնրադրեցէք և աղօթք մը ըրէք, որպէս զի յաջողիք ձեր անհետացած հայրը դանել և Աստուած՝ օրհնէ մեր ջանքերը:

Եւ կէս մը քաշելով, կէս մը հրելով զայն, տարաւ մինչեւ մթաստուեր խորանին առջեւ, որուն աստիճաններուն վրայ անշարժ մնաց: Մարդը անհետացաւ, քաջակերական քանի մը խօսքեր ևս մրմուալով:

Լէօնի ուզեց ծնրադրել: Բայց ի զուրք: Մարսափը սառեցուցած էր իր սիրաը և խօսքերը կը կեցնէր կոկորդին մէջ: Յանկարծ սկսաւ հեծկլտալ: Խորանին ետեւ, գերջալոյսին մէջ, նշմարած էր ճերմակներ հագած մէկը, որուն վերեւ մեռելի մը գլուխը կար և ականջին հասաւ խուլ ձայն մը, որ հրամայական շեշտով մը կ'ըսէր.

— Ծնրադրէ՛ և աղօթէ՛: Աղօթէ հօրդ վերադարձին համար, զոր բնաւ պիտի չտեսնես առանց իմ օգնութեանս:

Տարաբախտ աղջիկը, սոսկումին և անձկութենէն խելայիկ, ծունկի եկաւ սանդուղին աստիճաններուն վրայ և գլուխը ձեռքերուն մէջ ծածկեց, այլ ևո չտեսնելու համար այն սոսկալի երեւոյթը:

— Ամենակարո՞ղ Աստուած, կ'ըսէր հեծկլտալով, հայր յաւիտենական, օգնէ՛ ինծի, մի՛ թողուր որ խելքու կորոնցնեմ:

Հաղիւ թէ այս խօսքերը արտասանած էր, սրտապատառ աղազակ մը արձակեց, որուն եկաւ խառնուիլ խորանին ետեւէն լուսուղ անողորմ և հեղնական ծիծաղ մը:

Գաղտնի ոստիկանը սոսկումով տեսաւ թէ խորանին աստիճանները խոյս տուխն լէօնիի փափուկ մարմնին տակ և աղջիկը բերանաբաց ծակի մը մէջ անհետացաւ։ Զգացած էր թէ հողը կը շարժէր իր ներքեւ։ Վերջին վայրկեանին փորձած էր ոտքի ելլել, նահանջել, բայց շատ ուշ էր։ Մութ բացուածքին մէջ զահավիժեցաւ ու անոր անկումին խուլ ձայնը լսուեցաւ, — ծփծփում մը, որպէս թէ ջուրին մէջ ինկած ըլլար։

Փինքէրթըն անակնկալի եկած էր։ Բայց քառորդ րոպէ մը ետք կայծակի պէս դուրս խոյացաւ իր պահուըտած օթեակէն, մէկ ոստումով ցատկեց մինչեւ խորանը և լախտի զարհուելի հարուած մը տուաւ իր թաքսոցէն դուրս ելող կեզծ ոգիին, անկենդան վիճակի մէջ գետին փռելով զայն։ Յետոյ խաղցուց՝ ծլակը, որ խորանին մէկ կողմին վրայ կը գտնուէր և սանդուղին աստիճանները վերցնելու կը ծառայէր։ Ծակը, որ փակուած էր Օր. Ֆրէնքի վրայ, անմիջապէս երեւան եկաւ։

Փինքէրթըն իր ելեկտրական լսալուրին միջոցաւ լուսաւորեց այդ ծակը ու երեւան հանեց ջրանց մը, որուն շուրը կը հոսէր մեծ արագութեամբ։ Տարակոյ չկար թէ այդ շուրը կը թափէր նաւահանգիստին մէջ և լէօնի կորուած էր եթէ անմիջական օգնութիւն չհասցուէր իրեն։

Գաղտնի ոստիկանը չվարանեցաւ։ Ջուրին խորը միշրճուեցաւ։ Քիչ մը ետքը մակերեսը ելաւ եւ ուժգնորէն լողաց դէպ առաջ, ակռաներուն մէջ բռնելով իր ելեկտրական լսալուրը։

Բանի մը բոպէ ետք հասաւ աղջկան մարմնոյն, որ ջրանցքին վրայ կը լողար։ Անմիջապէս բռնեց զայն, գլուխը այդ դարշահոտ ջուրէն վեր բռնելով։

Հարկ էր միշտ դէպ առաջ լողաւ այդ նեղ ջրանցքին մէջ։ Խորանէն ծակին մէջ ցատկելով, գաղտնի ոստիկանը դիտած էր թէ կարելի չէր նոյն ծամբով դուրս ելլել, վասն զի միջնորմերը լերկ և խոնաւ էին։ Եւ յետոյ, ծակը նորէն գոցուած էր մեքենականօրէն։

Գրէթէ քառորդ ժամէ մը ի վեր կը յառաջանար ջրանցքին մէջ, կռնակին վրայ առած ըլլալով զգայազիրկ լէօնին, երբ վերջապէս հասաւ տեղ մը, ուր ծամբան կը լայն ար-

եւ ուր կը գտնուէր կայուզիի բերան մը, ուրկէ կը բարձրանար երկաթէ սանդուղ մը։ Ասիկա այն բերանն էր, ուրկէ կ'իջնէին ջրանցքը մաքրելու պաշտօն ունեցող զործաւորները։

Փինքէրթըն խիստ մեծ նեղութեամբ ելաւ այդ սանդուղէն։ Մէկ ձեռքովք բռնած էր ձողերը եւ միւսով՝ աղջկան մարմինը։ Կատարը հաօնելուն պէս ուսերով կրթնեցաւ ծակը գոցող երկաթեայ կափարիչին, զոր յաջողեցաւ վեր հանել։ Զարմանքի աղաղակ մը լսուեցաւ վերէն։ Փողոցը բաւական ոգեւորուած էր եւ ապշար անցորդները կը վազէին ջրանցքէն դուրս ելլող այս մարդուն բեռը առնելու։

Բաղմութեան մէջ ոստիկան մը կը գտնուէր։

— Ի՞նչ կ'ընէք հոդ եւ ինչո՞ւ ջրանցքին մէջ իջաք, հարցուց հեղինակաւոր շեշտով մը։

Փինքէրթըն ոստիկանին մօտեցաւ եւ ցած ձայնով ըստ անոր ականջն ի վար։

— Կառք մը բերել տուէք եւ այս աղջիկը առնելով տարէք իր տունը, Իէլէյս Սթրիթ, 265։ Ես Նաթ Փինքէրթընն եմ։ Աճապարեցէք։ Ամէնէն մօտիկ ոստիկանատունը ո՞ւր է։

Ոստիկանը յարգանքով բարեւեց, երբ անուանի ոստիկանին անունը լսեց։ Ամէնէն մօտիկ պահականոցին տեղը ցոյց տուաւ, կառապան մը կանչեց եւ նուղած աղջիկը կառքին մէջ դրաւ, Փինքէրթընին ըստ մեղք տանելու։

FOL. UPAZ

Այդ օրը, Քանատայի սահմանագլուխէն Նիւ Եօրք եկող կառախումը կէս ժամ կեցած էր Ալպանիի մէջ։ Ա. կարգի վակոնի մը մէջ, ամերիկան բանակին պատկանող երիտասարդ սպայ մը, թիկնաթոռի մը վրայ հանգստաւէտ կերպով նստած, իր լրագիրը կը կարդար։

26 տարեկանի մօտ աղւոր տղայ մըն էր սեւ ու գանգուր մազերով, հպարտորէն վեր դարձուած պեխերով եւ

գեղեցիկ աչքերով, որոնց համարձակ նայուածքը անմիջապէս համակրութիւն կը ներշնչէր:

Կտուախումբը վերջապէս ճամբայ ելաւ: Երբ քաղաքէն անցնելով բաց դաշտ ելաւ, երիտասարդ սպան գլուխը վերցուց եւ ըստ դիպուածի նայեցաւ վակոնին միւս ծայրը:

Յանկարծ իր բոլոր անդամներովը սարսռաց: Թիկնաթոռի մը մէջ նշմարած էր երիտասարդ սպայ մը, որ ճիշդ իրեն կը նմանէր ա'յն աստիճան որ տեսնողը պիտի կարծէր թէ իր երկւորեակ եղբայրն էր: Միեւնոյն փայլուն և գանգուր մազերը, միեւնոյն յաղթական պեխերը: Զուրի երկու կաթիւներ ասկէ աւելի չէին նմաներ իրարու:

Առաջին սպան դեռ իր ապչութենէն չսթափած, իրեն նմանող անձը ոտքի ելած և իրեն մօտեցած էր, զինուորական բարեւ տալով:

— Տեղակալ Զարլզ Թէլպօթի հետ է որ պատիւ ունիմ խօսելու, հարցուց ժպտելով:

Սոլան, որուն ուղղուած էր այս հարցումը, շատ զարմանալով, պատասխան չտուաւ: Խոշոր բացուած աչքերով կը դիտէր այդ երիտասարդը, զոր կեանքին մէջ չէր տեսած, եւ որ իր անունը և մականունը գիտէր: Պարիկներու աշխարհին մէջ կը կարծէր ինքզինք:

— Եթէ հաճիք որ ձեր քովը նստիմ, ըստ իրեն նմանող ակամայ ինդալով Թէլպօթի զարմանար դէմքին վրայ, համելուկին բացատրութիւնը պիտի տամ ձեզի:

— Բայց աւելորդ է հարցնելնիդ, մրմռաց տեղակալը: Կ'աղաչեմ, պարոն . . .

— Բոլ Բէռիէ աւարտեց գաղտնի ոստիկանը ինքինքը ներկայացնելով:

Նստաւ Թէլպօթի քով, գրալանէն նամակ մը հանեց և երկնցուց սպային:

— Կը հաճիքնախ և առաջ սա քանի մը տողերը կարդալ, Մր. Թէլպօթ:

Տեղակալը նամակը առաւ:

— Ա՛ն, պոռաց գիրը ճանչնալով, հօրաքրոջ աղջկան նամակն է: Կարդանք նայինք:

«Միրեցեալդ իմ, կ'աղաչեմ որ կատարելապէս վատանիս աս տոմսակը կրողին: Հոչակաւոր գաղտնի ոստիկան նաթ

Փինքէրթընը կամ անոր գործակիցներէն մէկն է: Մեծ վատանգի մէջ եմ և ձմարիտ բախտաւորութիւն մըն է որ անոր դիմած եմ: Այս տոմսակը կրողը քեզի ի՞նչ որ ըսէ, գործադրէ: Լիակատար բացատրութիւններ պիտի տայ քեզի: Գորովանքով կը սեղմեմ ձեռքերդ. — Քու Ախոնիդ»:

Սպային դէմքը անմիջապէս իր արտայայտութիւնը փոխեց և յանկարծական կարմրութիւն մը պատեց անոր դժոյն այտերը: Երկու ձեռքերը երկնցուց երիտասարդ ոստիկանին:

— Ուրեմն Մր. Փինքէրթընի հետ խօսելու պատիւը և հաճոյքը ունիմ, հարցուց բոլորպին յուղուած:

— Ոչ, պատասխանեց երիտասարդ ոստիկանը, իմ բռն անունս տուի ձեզի: Բոլ Բէռիէ կը կոչուիմ և զործակիցներէն մէկն եմ վարպետին, որ ձեր մօտ զրկեց զիս:

Զարլզ Թէլպօթ անոր ձեռքը սեղմեց սիրավիր կերպով:

— Շատ ուրախ եմ որ ձեր գրասենեակը կը հաճի այս զործով զբաղիլ, ըստ: Շատ սրանեղած էի որ հօրաքրոջ աղջիկը դիմած էր «Արդարութեան», վասն զի ամենադոյզն վատանութիւն չունիմ այդ մեծաշուք տիտղոսը ածնող մարդոց վրայ:

— Վատանզը ճիշդ այդ «Արդարութեան» զրասենեակէն է որ կուգայ Օր. Ֆրէնքի ու թերեւս նաև ձեզի համար, ըստ գաղտնի ոստիկանը:

Եւ բացատրեց Զարլզ Թէլպօթի թէ բարեպաշտ Մաք Պէրրի ի՞նչպէս սպրդած էր Լէօնիի մօտ:

— Իրաւունք ունիք, յայտարարեց սպան երբ Բոլ աւարտեց իր պատմութիւնը: Մարդ զրէթէ կրնայ կարծել որ այդ անձերը ոճիր մը գործելու միտք ունին:

— Վարպետիս կարծիքն ալ ա'յդ է, և ասոր համար է որ օպտակար դատեց Օր. Ֆրէնքի և Մաք Պէրրիի զրկած մարդուն հետեւիլ մինչեւ մատուար, ուր Օր. Ը պիտի աղօթէ:

— Մր. Մաք Պէրրի կ'յարան գալով զի՞ս ալ մատուարիտի տանի:

— Այս: Բայց ձեր տեղը ես պիտի անցնիմ, տեղակալի ենէս հագուելուս նպատակը այս է, ըստ Բոլ ինդալով: Զիս ձեր տեղը պիտի դնէ, Մր. Թէլպօթ, և ընաւ պիտի չկատածի, որովհետեւ ձեր լուսանկարէն կը ճանչնայ ձեզ ու ես շատ կը նմանիմ ձեզի, ինչպէս որ նոյն ինքն դուք

ըսիք։ Երբ կառախումը նիւ եօրք հասնի, դուք ձեր վակոնին մէջ կը մնաք մինչեւ որ անհետանամ Մր. Մաք Պէրրիի հետ։ Յետոյ կառք մը կը նստիք և կ'երթաք ձեր հօրաբրոջ աղջկան տունը, ուր կ'սպասէք դէպքերուն հետեւանքին։

— Շատ աղէկ, պատասխանեց երիտասարդ սպան։ Զեր փափաքածը պիտի ընեմ, քանի որ Էջոնի այդպէս կը խնդրէ ինձմէ։ Եւ յետոյ համոզուած եմ թէ դուք ինձմէ աղէկ գիտէք թէ ի՞նչ ընթացքի հետեւելու է։

Երկու երիտասարդները յետոյ գործին քանի մը մանրամասնութիւններովը զբաղեցան և բարեկամաբար խօսեցան մինչեւ որ կառախումը կայարան մտաւ։ Այն ատեն Բոլ բաժնուեցաւ Զարլզ Թէլպօթէն և գնաց վակոնին դրանը առջեւ կեցաւ, որպէս զի կառախումը կենալուն պէս կարենայ վար ցատկեւ։

Հազիւ թէ քանի մը քայլ առած էր, վերէն վար սեեր հազած պարոն մը իրեն մօտեցաւ զլսարկը ձեռքր և քաղաքավարութեամբ հարցուց։

— Արդեօք տեղակալ Զարլզ Թէլպօթի հետ խօսելու պատիւը ունիմ։

— Ես ինքս եմ, պատասխանեց Բոլ համարձակորէն։ Դուք անշուշտ Մր. Մաք Պէրրին էք։

— Ձեզի ծառայելու պատրաստ, Մր. Թէլպօթ։ Կայարան եկած եմ ձեզ առնելու, ինչպէս որ Օր. Ֆրէնք անշուշտ իմացուցած է ձեզի։

— Այո՛, այո՛, տեղեակ եմ։ Ուրեմն պէտք է որ ձեր մատուուը երթամ հետազոտութիւններու ամրող տեւողութեան միջոցին ձեր աղանդին յարելու համար։ Պէտք է խոստովանիմ ձեզի թէ ես ջնոմեռանդ մէկը չեմ, Մր. Մաք Պէրրի և թէ այդ բոլոր արարողութիւնները կը նկատեմ իրեն կատարելապէս ցնորական և աւելորդ։ Բայց կ'ենթադրեմ թէ ուրիշ կերպով պիտի չշարժիք բնաւ, թէ ասոնք ձեր սովորութիւններն են, որ ձեր կրօնական դաղափարներուն կը համապատասխանեն և իրաւ որ հարկ չկայ ըսելու թէ ձեր պահանջութերուն կը համակերպիմ, քանի ըսելու թէ ձեր պահանջութերուն կը համակերպիմ, քանի որ ասիկա միակ միջոցն է ապահովելու ձեր աջակցութիւնը։ զոր հօրաքրոջս աղջիկը թանկադին կը նկատէ։

Մաք Պէրրի զլսարկը զլուիր դրաւ և քաղցրութեամբ պատասխանեց։

— Աղէկ կ'ընէք, Մր. Թէլպօթ։ Մենք առանց Աստուծոյ բան մը չենք ըներ և կրնամ ըսել թէ անոր օժանդակութեանը չնորհիւ ձեռք կը բերենք արտասովոր արդիւնքներ։ Տարակոյս չունիմ թէ աստուածային չնորհին պիտի արժանանաք երբ ծնրադրէք մեր խորանին առջեւ ու ջերմեռանդ աղօթք մը ընէք սրառվին։

Բոլ շրթունքը խածաւ Մրր Կեղծաւորին քիթին չխընդալու համար։ Մաք Պէրրիի բոլոր խօսքերը կեղծ էին։ Բայց գաղտնի սստիկանը յարգանքի և ակնածութեան երեւոյթ մը առաւ, ինչ որ գոհունակութեան ժպիտ մը առաջ բերաւ Մաք Պէրրիի լերկ դէմքին վրայ։ Յետոյ անոր հետ նստաւ հին կառքին մէջ, որ կայարանին դրան առջեւ իրենց կ'սպասէր։

— Ձեր վրայ թսւզթեր, ինքնութեան վկայագիրներ ունիք, Մր. Թէլպօթ, հարցուց Մաք Պէրրի։ *

— Անշուշտ։ Պէտք ունիք։

— Այո՛։ Սստիկանատուն պիտի երթամ և կ'ուզէի քօմիւքին ներկայացնել զանոնք։

— Ձեմ կրնար ձեզի հետ գալ, հարցուց Բոլ, զարմանք կեղծելով։

— Անկարելի է։ Տուէք ձեր թուզթերը։ Անոնք այս երեկուն իսկ ձեզի կը վերադարձւին։

— Առէք, ըսաւ Բոլ զրպանէն թղթապահակ մը հանելով և ընկերոջը տալով։ Սաոր մէջ պիտի զանէք վկայագիրներ։

Մաք Պէրրի փութով առաւ թղթապահակը և գրպանին մէջ անհետացուց։ Բոլ ներքնապէս կը հիանար հեռատեսութեանը վրայ Փինքէրթընի, որ առաջուընէ ըսած էր իրեն թէ կեղծ սստիկանը անշուշտ իր թուզթերը պիտի ուզէր իրմէ։ Մաք Պէրրի փորձեց բարեպաշտական խօսակցութեան մը սկսիլ և Բոլ այնպէս ցուցուց թէ մեծապէս կը շահագըրգուէր «Արդարութեան» տնօրէնին ուռուցիկ խօսքերէն։ Իրականին մէջ, անիկա կը դիտէր փողոցները, որոնցմէ կառապանը կ'անցընէր իր ձերը և Փինքէրթընի պէս կը նշմարէր անոր կատարած վարպէտ շրջանները։

Կառքը վերջապէս կեցաւ այն մթաստուեր տունին առջեւ, ուր Օր. Ֆրէնք և իր առաջնորդը մտած էին քիչ մը

առաջ: Մաք Պէրրի երեք հարուած զարկաւ դրան և պահապանին հարցումին պատասխանելով ըսաւ.

— «Արդարութեան» սուրբ աղանդէն եղբայր մը:

Դուռը բացուեցաւ և երկու մարդիկը ներս մտան:

Բոլ իր առաջնորդին հետեւեցաւ ապրանքներով խճողուած մթերանոցին և բակին մէջէն: Մատուիին առջեւ հասնելով, Օր. մրէնքի պէս կասկած մը ունեցաւ:

— Ծնրագրեցէք խորանին առջեւ ու աղօթեցէք, Մրժէլպօթ, ըսաւ Մաք Պէրրի: Եղէ՛ք...

Չկրցաւ աւարտել: Խորանին ետեւէն ճերմակ երեւոյթ մը դուրս ելաւ:

— Փախէ՛ք, Մաք Պէրրի, պոռաց, փախէ՛ք, մատնուեցա՞նք:

Մաք Պէրրի նահանջեց սարսափահար և քիչ միաց որ զետին իշնաց զգայազիրկ:

Խորանին աստիճաններէն՝ իջնող մարզը, որ հիմա վերկառնէր իր դիմազիծերը քօղարկող գարշատեսիլ դիմակը, Օր. Ֆրէնքի տունը եկող առաջնորդն էր, զոր Փինքէրթըն զգայազիրկ ըրած էր եւ որ հիմակ սթափած էր իր նուազումէն: Հասկցած էր վտանգը եւ կը փորձէր փախչիլ, իմացնելէ ետք իր տիրովը որ ինք ալ փախչի:

Բայց Բոլ ատրճանակը հանեց եւ ուղղեց Մաք Պէրրիի վրայ, որ կը դողար:

— Զեռքերնիդ վե՛ր, պոռաց: Երկու քդ ալ կը ձերբակալեմ, թշուառականնե՛ր: Իմ կալանաւորներս էք:

— Ո՛չ տակաւին, ըսաւ Մաք Պէրրի հեգնաբար, ինք ալ իր ատրճանակը հանելով:

Հրազէնի երեք հարուածներ պարպուեցան միեւնոյն ատեն, վասն զի կարծեցեալ ուրուականն ալ նշան առած էր գաղտնի ոստիկանին վրայ:

Բոլ, աշ թեւէն վիրաւորուելով, անմիջապէս ցատկեց և սիւնի մը ետեւ ապաստանեցաւ: Իր գնդակը դպած էր Մաք Պէրրիի գլխուն: Զարագործը, ինչպէս նաեւ իր մեղսակիցը դիմացի սիւնին ետեւը ապաստան վնտուեցին: Այն ատեն սկսաւ կանոնաւոր հրացանաձութիւն մը, որ յանկարծ ընդմիջուեցաւ մատուաէն ներս խոյացող Փինքէրթընի և քանի մը ոստիկաններու ժամանումով: Հրազէնի քանի մը

հարուածներ եւս, յետոյ զիրկընդխառն կարճատեւ կախ մը եւ երկու ոճրագործները պարտազնդուեցան եւ անկարողութեան մատնուեցան:

Փինքէրթըն: Օր. Ֆրէնքը ոստիկանին յանձնելէ ետք, մօտակայ պահականոցը գացած, օգնական ոյժ առած և ապրանքներու մթերանոցը գարձած էր, կարգախօսը տալով գոնապանին: Լախտի հարուածով մը զգայազիրկ ըրաւ դուռը բացող մարդը, ոստիկանի մը հսկողութեան յանձնեց զայն եւ իր օգնական ոյժին մնացեալ մասովը մատուաէն ներս խոյացաւ: Ճիշտ ժամանակին եկած էր զէշ դիրքէ մը աղատելու համար իր հաւատարիմ զործակիցը:

Գալով երիտասարդ տեղակալ Թէլպօթի, Օր. Ֆրէնքի տունը գացած ատեն շատ զարմացաւ բժիշկի մը ձեռքը դանելով իր սիրելի նշանածը: Բարեբախտաբար ամէն վտանգ անհետացած էր և Լէօնի իր գիտակցութիւնը կը վերտանար իր հօրաքրոջ տղուն եկած ատենը:

Աւրախութեան արցունքներով ընդունեց զայն և գրլիուն եկածները պատճեց անօր: Ժամ մը ետք նաթ Փինքէրթըն միացաւ իրենց և այդ աղետալի գործին բոլոր մանրամասնութիւնները հաղորդեց: «Արդարութեան» գրասենեակը ուրիշ բան չէր բայց եթէ չարագործներու որչ մը, որոնք իրենց զոները կը հրապուրէին բարեպաշտական և կեղծաւոր ծեքենքումներով:

Փինքէրթըն տարօրինակ գտած էր որ Մաք Պէրրի այլքան լաւ տեղեկութիւն ունեցած ըլլար Ֆրէնք ընտանիքին մասնաւոր զործերուն վրայ: Անոր արարքները դրդած էին վինք աւելի մօտէն զրազիլ «Արդարութեան» գրասենեակով և անոր տնօրէնով: Գիտենք թէ ի՞նչ ճարտար ձեւով ձեռք անցուցած էր ոճրագործներու խումբը: Դժբախտաբար քանի մը զոներ արդէն իրեց կեանքը կորսնցուցած էին այս ծուզակ—խորանին վրայ, ուր աղօթելու կը տանէին զիրենք: Ժամանակ մը ետքը իմացուեցաւ սնիկա արբանեակներէն մէկուն խոստովանութիւնովը Մաք Պէրրիի յլացած ծրագրին՝ իր օձիքը աղատելու համար Ֆրէնք ընտանիքէն:

Ազիրախտը, որ Լէօնիի հօր՝ ծերունի Հերալտի հետ յարաբերութեան մէջ գտնուած էր, ո՛ւ և է պատրուակով մատուու տարած և անհետացուցած էր զայն: Մարմինը գտնուեցաւ նաւահանգիստի ջուրերուն մէջ:

Յետոյ ուզեց անհետացնել նաև կէօնին և Զարլլ թէլ-պօթը, այս վերջինին բոլոր թուղթերը գողնալէ ետք; Խումբին անդամներէն մէկը ինքնութեան այդ թուղթերը պիտի գործածէր տեղակալին անուամբ և անոր տեղ տիրա-նալու համար Հէրալտ Ֆրէնքի հարստութեան:

Այս յայտնութիւնները ընող մեղսակիցը չուզեց անուա-նել միւս անդամները այս գարշելի ապանդին, որուն հետ Փինքէրթըն շատ զգայացունց և վտանգաւոր գործեր պիտի ունենար ապագային մէջ:

Մաք Պէրրի, որ իր բուն անունովը Պօրհէմ կը կոչուէր, մահուան դատապարտուեցաւ և կառավինատ հանուեցաւ, ինչպէս նաեւ Ֆրանսին, —այն մեղսակիցը, որ ուրուականի դերը կը խաղար և խորանին աստիճանները կը բանար զո-հերուն տակ: «Արդարութեան» միւս անդամները, զորս կարելի եղաւ բռնել, Սինկ—Սինկ դրկուեցան երկար տա-րիներու համար:

Օր. Ֆրէնք և տեղակալ Թէլպօթ այս եղերական դէպ-քերէն ժամանակ մը ետք իրարու հետ ամուսնացան եւ չմոռցան իրենց երախտագիտութիւնը յայտնել գաղտնի ոս-տիկանին որ իրենց կեանքը փրկած էր:

ՎԵՐՋ



910

ՀՀ Ազգային գրադարան



NL1007227 7

ՀՀ Ազգային գրադարան



NL1007226 6

ՀՀ Ազգային գրադարան



NL1007225 5

ՀՀ Ազգային գրադարան



NL1007224 4

ՀՀ Ազգային գրադարան



NL1007223 3

ՀՀ Ազգային գրադարան



NL1007017 2

ՀՀ Ազգային գրադարան



NL0933053 1



NL1007238 18



NL1007234 14



NL1007233 13



NL1007237 17



NL1007232 12



NL1007236 16



NL1007231 11



NL1007235 15



NL1007230 10



NL1007229 9



NL1007228 8



NL1007241 21



NL1007240 20



NL1007239 19

